# «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ

Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է 31 հունվարի 2011 թվականից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: «Իրավունքի եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ ԻԵՄ ՀԿ/՝ նախարարության «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով նախատեսված հիմնական ոլորտներից՝ ներքին գործերի ոլորտում ունի մշտադիտարկման, վերահսկման, աջակցման փորձ պետական և ոչ պետական մարմինների, Կառավարության քաղաքականության գործունեության ոլորտներում:

ՀՀ ՆԳ նախարարությանը օրենքով վերապահված մի շարք գործառույթներում «Իրավունքի Եվրոպա Միավորում» ԻՀԿ-ի կողմից կատարվող գործողություններ կարևոր տեղ են զբաղեցնում, մասնավորապես 2024 թվականին ԻԵՄ ՀԿ-ի նախագահ Լուսինե Հակոբյանը ամփոփել և խմբագրել է <u>*Եվրամիություն-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի ամփոփիչ զեկույցը*</u>, որտեղ տեղ են գտել մի շարք գլուխներ կապված ՀՀ ՆԳ նախարարությանը վերապահված գործառույթների հետ, մասնավորապես՝ **Ոստիկանության բարեփոխումների ընթացք**ին նվիրված գլուխը, որտեղ նկարագրվում են 2020 թվականին ՀՀ կառավարության ընդունած ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը, բարեփոխումներին խոչընդոտող օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքները: Պարեկային ծառայության ներդրումը, որն էապես բարելավել է հանցավորության դեմ պայքարը: Պարեկային ծառայության ունեցած բացերը, այդ թվում բարեվարքության ուսումնասիրության պակասը: Ամփոփ տրվել են տոկոսային ցուցանիշներ կապված Պարեկային ծառայության կողմից հանցավորության բացահայտման դեպքերի թվի աճի հետ: Հաջորդիվ նվիրվել է գլուխ **վիզաների դյուրացմանն ու ազատականացմանը,** որտեղ, ի թիվս այլնի ներկայացվել է վիզայի ազատականացման գործընթացը, վիզաների տրամադրման դյուրացումը, քննարկվել են գործող օրենսդրական բացերը:

ԵՄ-Հայաստանի քաղհասարակության պլատֆորմի համանախագահ Լուսինե Հակոբյանը 2025 թվականին խմագրել է <u>*Եվրամիություն-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման վերաբերյալ 2024 թվականի զեկույցը*</u>, որտեղ տեղ է գտել **Մարդու իրավունքները ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում** գլուխը, որտեղ էլ առաջարկություններ են ներկայացվել ՆԳ նախարարությանը:

Զեկույցում տեղ է գտել **Հայաստան-ԵՄ վիզաների ազատականացման գործընթաց, ընթացիկ իրավիճակ, մարտահրավերներ և առաջարկություններ** գլուխը, որտեղ նկարագրվում են վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի բարեփոխումների շրջանակը չորս հիմնական ոլորտներում՝ տվյալների պաշտպանություն և փաստաթղթերի անվտանգություն, սահմանների կառավարում, միգրացիա և ապաստարան, հասարակական կարգ և անվտանգություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն:

Ի թիվս այնի տեղ է գտել **ՀՀ-ում անկանոն միգրացիայի և սահմանների կառավարման խնդիրները ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի համատեքստում** գլուխը, որտեղ

նկարագրվում են Հնդկաստանի, Իրաքի և Եգիպտոսի քաղաքացիների ներգաղթի հետ կապված առաջացած խնդիրները՝ Հայաստանում ապօրինի կամ անկանոն միգրացիայի և հնարավոր թրաֆիքինգի տեսանկյունից: Ներկայացվում են առաջացած խնդիրների հասցեատերերը և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները:

https://eu-armenia.am/հայտարարություններ կայքեջում հնարավոր է տեսնել մի շարք հայտարարություններ կապված Հայաստանի և Եվրամիության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման Պլատֆորմի անդամների հանդիպումներից, որտեղ քննարկել են մի շարք հարցեր, համաձայն որոնց համաձայնագրի կիրարկման վերաբերյալ Պլատֆորմի անդամները նշել են, որ՝

**(Հանդիպում 1)**

1. Համաձայնագիրը գնահատվում է որպես կարևոր փուլ ԵՄ-Հայաստան համագործակցության ընդլայնման համար, հիմնված ընդհանուր արժեքների վրա:
2. Հայկական կողմի պարտավորությունների իրականացման դանդաղ տեմպերը մտահոգում են, և կոչ է արվում արագացնել դրանք՝ շոշափելի արդյունքների համար:
3. Բարեփոխումների խոր գործընթացը կարևոր է Հայաստանի և ԵՄ հարաբերությունների համար:
4. Համաձայնագրում ընդգծված են մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը:
5. Շարունակվում է աշխատանքը ժողովրդավարության հաստատման, ընտրությունների ազատության ու քաղհասարակության ներգրավման ուղղությամբ:
6. Վերաբերմունքը դատական համակարգի, պետական կառավարման, կոռուպցիայի կանխարգելման ու ֆինանսների թափանցիկության ուղղություններով:
7. Ջգալի ներդրում՝ բարեփոխումների գործընթացում քաղհասարակության մասնակցության ապահովման համար:

**(Հանդիպում 2)**

1. Պլատֆորմի հիմնական գործառույթներ՝ Համաձայնագրի կատարման վերահսկողություն, բարեփոխումների թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում, և հասարակության տեղեկացվածության բարձրացում:
2. Արդյունավետ հաղորդակցություն ՀՀ կառավարության, ԵՄ-ի և քաղաքացիական հասարակության միջև՝ նպաստելով համաձայնագրի նպատակներին հասնելու համար:
3. ՔՀՊ-ն ՀԸԳՀ-ն դիտարկում է որպես Հայաստանի ժողովրդավարացման և զարգացման խթան:
4. Քաղհասարակության ներգրավումը կառավարության պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացներին ողջունվում է՝ ՔՀՊ-ը պատրաստ է աջակցելու տարբեր կազմակերպություններին:

5. Կառավարության հետ հաղորդակցությունը համակարգելու և լրացնելու նպատակով օպերատիվ միջոցառումների ձևավորման ակնկալիք:
6. Կարծիքներ և առաջարկություններ ՔՀՊ-ին կհեռարձակվեն, և քաղաքացիական հասարակությունն ակնկալում է հետազոտություններ և տեղեկացվածության բարձրացման ծրագրերի հրավերներ:
7. ՔՀՊ-ն ընդգծում է, որ ժողովրդավարությունը և զարգացումը հնարավոր են միայն խաղաղության և կայունության պայմաններում՝ հատուկ կարևորելով Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքների պաշտպանությունը:

**(Հանդիպում 3)**

**ՀԸԳՀ-ի իրականացման վերաբերյալ ՀԸԳՀ անդամների դիտարկումները՝**

1. Պլատֆորմի հիմնական գործառույթներն ընդգրկում են ոլորտային փորձագիտությամբ մասնակցություն, բարեփոխումների թափանցիկ և հաշվետու իրականացման ապահովում, և հանրային իրազեկվածության բարձրացում ՀԸԳՀ-ի շրջանակներում իրականացվող գործունեության վերաբերյալ:
2. Հարթակը միջոցներ է ձեռնարկել՝ մոնիթորինգ իրականացնել նախանշված առաջնահերթ ոլորտներում, և հետագա ժամանակահատվածում նպատակ ունի ամրապնդել իր համակարգող դերը:
3. Անդրադարձ է, կատարվել այն հարցին, որ արդյունավետ հաղորդակցությունը և ակտիվ ներգրավվածությունը քաղաքացիական հասարակության, Հայաստանի կառավարության, ԵՄ-ի և անդամ պետությունների միջև էական է Պլատֆորմի գործառույթների արդյունավետ իրականացման համար: Ներկա իրավիճակը համարվում է անբավարար:
4. Անդամները ափսոսանք են հայտնել, որ որոշ պետական պաշտոնյաների վերաբերմունքը Պլատֆորմի գործունեության և առաջարկությունների նկատմամբ շարունակում է մնալ պաշտպանողական և ոչ կառուցողական:
5. Նրանք հույս են հայտնել, որ Պլատֆորմի և կառավարության միջև հաստատված հաղորդակցությունը կբարելավվի, և Պլատֆորմի առաջարկությունները հաշվի կառնվեն բաց և կառուցողական ձևով:
6. ՀԸԳՀ անդամները նշում են, որ CEPA-ն Հայաստանի ժողովրդավարացման և եվրոպական ինտեգրման խթան է: Զգալիորեն պետք է մեծացվի երիտասարդության ներգրավվածությունը՝ համապարփակ կրթական ծրագրերի միջոցով:
7. Կոչ են արել ՀՀ իշխանություններին, ԵՄ-ին և անդամ պետություններին միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու Հայաստանի եվրոպական քաղաքացիական հասարակության հարթակների հեղինակությունն ու ամբողջականությունը, հատկապես երբ դրանք ենթարկվում են հարձակումների ուժերի կողմից, որոնք դիմադրում են Հայաստանի եվրոպական ուղու գաղափարին:
9. Մտահոգություն է հայտնվել իրավապահ մարմինների կողմից իրավապաշտպաններին և փաստաբաններին ցուցաբերված բռնության դեպքերի մասին:

**(Հանդիպում 4)**

1. Դրական վերաբերմունք է արտահայտվել ԵՄ-ՀՀ գործընկերության խորհրդի 2024 թվականի փետրվարի 13-ի դրական արդյունքների և Հայաստանի ղեկավարության ջանքերի վերաբերյալ՝ նոր գործընկերության օրակարգի ներդրմամբ և Հայաստանը Եվրամիության հետ հարաբերությունները զարգացնելու պարտավորության ընդունմամբ:
2. Այնուամենայնիվ, ԵՄ-ՀՀՔՀ-ն նշել է, որ սույն զարգացումները չեն կարող փոխարինել կամ թերագնահատել «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (CEPA) շրջանակներում ստանձնված օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների ռեժիմը: Կոչ է արվել քաղաքացիական հասարակությանը ակտիվորեն մասնակցել այս գործընթացի իրականացմանը:
3. Մտադրություն է անտահայտվել ապագայում ուժեղացնել Քաղաքացիական հասարակության ջանքերի համախմբումն ու մոնիթորինգի համակարգված իրականացումը ՀԸԳՀ-ի շրջանակներում, հատկապես ՀՀ մարզերում: Նշելով, որ հարթակն ակնկալում է, որ այդ գործընթացը կպահպանի իր համակարգող դերը:
4. ԵՄ-ՀՀՔՀ-ն նշել է, որ իր գործառույթների արդյունավետ իրականացումը կպահանջի ԵՄ հանձնաժողովի և ՀՀ կառավարության կողմից շարունակական ֆինանսական աջակցություն:
5. Հարթակը ողջունել է ԵՄ-ՀՀՔՀ-ի և ՀՀ կառավարության միջև համագործակցության բարելավումը, բայց միևնույն ժամանակ ակնկալել է, որ հաղորդակցությունը կդրվի ավելի ինստիտուցիոնալ հիմքերի վրա: Նշելով, որ Պլատֆորմի առաջարկությունները պետք է հաշվի առնվեն բաց և կառուցողական ձևով:
6. ԵՄ-ՀՀՔՀ-ը կրկին հաստատել է, որ CEPA-ն միայն միջազգային շրջանակ չէ, այլ նաև մի գործիք, որը ուժեղ խթան է հանդիսանում Հայաստանի ժողովրդավարացման և ԵՄ-ին ապագա անդամակցության համար:
12. *Դրական է գնահափվել, որ Հայասփանի Ներքին գործերի նախարարության վերահսկողության ներքո սփեղծվել է Ոսփիկանության պարեկային ծառայությունը՝ ի նպասփ օրենքի պահպանման:*
13. *Միևնույն ժամանակ, ԵՄ-ՀՀՔՀ-ն հույս է հայփնել, որ մոնիթորինգի միջոցով բարեփոխումների այս ոլորփում կհաջողվի նվազեցնել ոսփիկանության կողմից բռնության դեպքերը, որոնք վերջին շրջանում աճել են* և այլն:

**(Հանդիպում 5)**

ԵՄ-ՀՀ ՔՀՊ-ն նշել է, որ՝

1. ԵՄ-ՀՀ ՔՀՊ-ն ողջունում է 2024 թվականի սեպտեմբերի 9-ին Եվրամիության և Հայաստանի միջև վիզային ռեժիմի ազատականացման շուրջ սկսված երկխոսությունը: Այնուամենայնիվ, պլատֆորմը կոչ է անում Հայաստանի իշխանություններին հետևողական ջանքեր գործադրել ԵՄ-ի հիմնական չափանիշներին համապատասխանելու համար, հատկապես՝ փաստաթղթերի անվտանգության, սահմանների և միգրացիոն հոսքերի կառավարման,

կոռուպցիայի դեմ պայքարի, և հիմնարար իրավունքների պաշտպանության ոլորտներում:

2. ՔՀՊ-ն ընդգծում է, որ կարևոր է իրականացնել թափանցիկ և ներառական խորհրդակցություններ քաղաքացիական հասարակության, ներառյալ ԵՄ-ՀՀ ՔՀՊ-ի հետ՝ նոր համաձայնագրի վերջնական փաստաթղթի ստորագրման նախաշեմին:
3. ԵՄ-ՀՀ համագործակցության նոր օրակարգի վերաբերյալ խորհրդատվություն ՔՀՊ-ն կրկին հաստատում է, որ ՀԸԳՀ-ն առաջին հերթին դիտվում է որպես Հայաստանի ժողովրդավարության վերածման և ԵՄ անդամակցության խթան, և ողջունում է նոր համագործակցության օրակարգի շուրջ բանակցությունները:
4. ԵՄ-ՀՀ ՔՀՊ-ի հիմնական գործառույթներից մեկն է՝ ՀԸԳՀ-ի կատարումը և մոնիթորինգը, և պլատֆորմը կարևորում է շարունակական աջակցություն՝ այդ գործընթացի արդյունավետ իրականացումը ապահովելու համար: ՔՀՊ-ն կոչ է անում Հայաստանի կառավարության հետ համագործակցել և արմատապես թարմացնել ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզը՝ քաղաքացիական հասարակության առաջարկությունները ներառելու նպատակով:
5. ՔՀՊ-ն մատնանշում է անհամաչափ ուժի կիրառման և ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների հարցը: ՔՀՊ-ն կոչ է անում համապարփակ միջոցներ ձեռնարկել՝ նվազեցնելու այսպիսի դեպքերը:
6. ՔՀՊ-ն դատապարտում է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունների նախագծի ընդունումը, որը նախատեսում է զանգվածային պետական տեսահսկողություն: Պլատֆորմը նշում է, որ նման օրենսդրությունը պահանջում է լայն հանրային քննարկումներ և անձնական տվյալների պաշտպանության հստակ շրջանակ:
10. ՔՀՊ-ն ողջունում է ընտանեկան բռնության կանխարգելման օրենսդրության բարելավումները, սակայն կոչ է անում նաև ներգրավել ԱՄԿ «Բռնության և ոտնձգությունների մասին» թիվ 190 կոնվենցիան՝ աշխատանքային միջավայրում բռնության կանխարգելման համար:

**(Հանդիպում 6)**

ՔՀՊ-ն՝

1. ողջունել է ՀՀ ազգային ժողովի ընդունած օրենքը՝ ԵՄ-ին անդամակցման գործընթացը սկսելու մասին և կոչ է արել մշտադիտարկել դրա իրականացման գործընթացը:
2. ՀԸԳՀ-ի շրջանակներում ՀՀ իշխանություններին կոչ է արվում արագ կատարել չկատարված պարտավորությունները՝ խթանելու ժողովրդավարական բարեփոխումները:
3. Առաջարկում է, որ քաղաքացիական հասարակությունը ներգրավվի բոլոր հիմնական բարեփոխումների մեջ՝ ապահովելով դրանց արդյունավետ իրականացումը:

**(Հանդիպում 7)**

ՔՀՊ-ն նշել է, որ

1. Ողջունել է 2025 թվականի դեկտեմբերի 2-ին Բրյուսելում կայացած ԵՄ-ՀՀ գործընկերության խորհրդի 6-րդ նիստի արդյունքները, որտեղ քննարկվել են CEPA-ի և վերանայված ճանապարհային քարտեզի իրականացումը՝ շեշտադրելով բարեփոխումների, մարդու իրավունքների, օրենքի գերակայության և ժողովրդավարության ուղղությունները: Ուշադրություն է դարձվել նաև էներգետիկ բարեփոխումներին և վերականգնվող էներգիայի զարգացմանը:
2. ԵՄ-ՀՀ երկկողմ հարաբերությունների ակտիվացումը ողջունվում է, հատկապես բարձր մակարդակի այցելությունների շարքի արդյունքում: Ավելին՝ կոչ է արվում շարունակել բարեփոխումների օրակարգի առաջընթացը՝ ապահովելով համահավասար զարգացում:
3. Ողջունում է Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի առաջընթացը, և կոչ է անում սերտ համագործակցություն քաղաքացիական հասարակության և սոցիալական գործընկերների հետ՝ պահանջվող չափանիշների իրականացման համար:
4. Ընդունվում է ԵՄ-ՀՀ նոր գործընկերության օրակարգը՝ լրացնելով ՀԸԳՀ-ը և ամրապնդելով համագործակցությունը անվտանգությունում, դիմադրողականության մեջ, տնտեսական դիվերսիֆիկացմանն ու կարգավորման ոլորտներում:
5. Կոչ է անում ուժեղացնել բարեփոխումները իրավունքի գերակայության, արդարադատության, ոստիկանության և քրեակատարողական համակարգերի բարելավման ուղղությամբ՝ ապահովելով թափանցիկությունը և արդյունավետությունը:
6. Նշվում է ոստիկանության կողմից ուժի չափազանց կիրառման հետ կապված մտահոգությունները, և կոչ է արվում ապահովել անկախ ու արդյունավետ հետաքննություններ՝ ուժի կիրառման դեպքերի վերաբերյալ:

ԻԵՄ ՀԿ-ն ստեղծել է՝

Ձեռնարկմներ և ուղեցույցներ՝

- 2005 թվական «Մարդու իրավունքների ուղեցույցի» հայերեն տարբերակի ուղեցույց,
- 2024 թվականին՝ Միջազգային քրեական դատարանի հետ համագործակցության վերաբերյալ աշխատանքային ձեռնարկ,
- 2017 թվականին՝ Դիտորդների, վստահված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար ձեռնարկը՝ «2017 թ. խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողություն» ծրագրի շրջանակներում,
- 2017 թվականին «ՔԱՂԱՔԱՑԻ ԴԻՏՈՐԴ» նախաձեռնություն դիտորդի ուղեցույցը,
  Գրքերից՝
- «Ինչպես դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան» գրքի հայերեն տարբերակ

Դասընթացներ՝

- «Սահմանադրական իրավունքի դպրոց 2025»,
- «Սահմանադրական իրավունքի ամառային առաջին դպրոց 2024»,
- «Սահմանադրական իրավունքի ամառային երկրորդ դպրոց 2023»,

Պրեզենտացիաներ՝

- Դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքները թեմայով,
- ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ թեմայով,
- Քվեարկության արդյունքների ամփոփում թեմայով,
- Քվեարկության կազմակերպում թեմայով,
- Քվեարկության կարգը և այլ մի շարք թեմաներով,

Թեմատիկ զեկույցներ՝

- 2024 թվականին՝ **Հայաստանի և Եվրամիության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (Comprehensive and Enhanced Partnership Agreement - CEPA)** վերաբերյալ Եվրամիություն-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմի ամփոփիչ զեկույց - (https://eu-armenia.am/զեկույցներ),
- 2024 թվականին՝ **Հայաստանի և Եվրամիության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (Comprehensive and Enhanced Partnership Agreement - CEPA) կիրարկման** վերաբերյալ զեկույց - (https://eu-armenia.am/զեկույցներ),
- 2018 թվականին՝ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության գործընթացի հանրային վերահսկողություն երկրորդ միջանկյալ զեկույց,
- 2018 թվականին՝ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության գործընթացի հանրային վերահսկողություն նախնական զեկույց,
- 2018 թվականին՝ 2017 թվականի ապրիլի 2-ի ՀՀ ազգային ժողովի ընտրությունների դիտորդական առաքելություն զեկույց,
- 2016 թվականին՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ծառայողի թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված բաց մրցույթների, ՀՀ գլխավոր դատախազությունում դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացված բաց մրցույթների և ՀՀ քննչական կոմիտեում ծառայողների թեկնացությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացված գրավոր քննությունների վերբերյալ զեկույց,
- Մի շարք զեկույցներ ՄԻԵԴ-ի դատավորի պաշտոնում ՀՀ կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի, առաջադրվող թեկնածուների ընտրության վերաբերյալ և այլն:

Հրապարակվել են մի շարք պարզաբանումներ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումների վերաբերյալ:

Կազմակերպության մասնագիտական փորձառությունը կայանում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և եվրոպական ընտանիքի առաջադեմ պետությունների համար համընդհանուր հռչակված արժեքների տարածման գործում՝

համընդհանուր չափանիշների մշակման և դրանց ներդրման մեջ, ի թիվս այլնի դերակատարություն ունենալում: «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ ավագ իրավախորհրդատու, փաստաբան Տիգրան Եգորյանը ընդգրկված է ՀՀ Սահմանադրական դատարանի սահմանադրական բարեփոխումների խորհրդի կազմում: Հատկանշական է, որ ԻԵՄ ՀԿ-ի մի շարք առաջարկություններ Սահմանադրության մարդու իրավունքներին վերաբերող դրույթների մասով Սահմանադրական բարեփոխումների խորհրդին ներկայացված հայեցակարգում:

ԻԵՄ ՀԿ-ի փորձառությունը ներառում է **եվրոպական իրավունքի ուսումնասիրություններն ու վերլուծությունններն, որոնք ներառում են** ԵՄ հիմնադիր և ոլորտային պայմանագրերի ուսումնասիրությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) կիրառությանը նպաստելը, Եվրոպական դատարանի նախադեպերի վերլուծությունները:

**ԻԵՄ ՀԿ-ն իրականացնում է նաև իրավական խորհրդատվություն և աջակցություն՝ ք**աղաքացիներին, կազմակերպություններին կամ պետական մարմիններին, ինչպես նաև միջազգային և եվրոպական իրավական պահանջներին համապատասխանեցման վերաբերյալ աջակցություն:

«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության փորձառությունը ներառում է նաև **հետազոտական աշխատանքներ կատարումը,** որոնք վերաբերում են իրավական քաղաքականության, օրենսդրական փոփոխությունների, մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ հետազոտություններն, վերլուծական զեկույցների, գնահատականների և առաջարկությունների մշակմանը:

ԻԵՄ ՀԿ-ի փորձառությունը իրավապաշտպան գործունեության ոլորտում ներառում է մարդու իրավունքների խախտումների ուսումնասիրությունը, խախտման դեպքերի փաստաթղթավորումը, իրավապաշտպան նախաձեռնությունների իրականացումը, օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների ուսումնասիրությունը, եվրոպական ստանդարտներին համապատասխանեցման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

ԻԵՄ ՀԿ-ն կատարում մի շարք կ**րթական ծրագրեր, որոնք ներառում են ս**եմինարներ, դասընթացներ, վերապատրաստումներ, արշավներ՝ ուղղված իրավական իրազեկության բարձրացմանը:

ԻԵՄ ՀԿ-ն իրականացնում է մի շարք **միջազգային համագործակցություններ,** որոնք նպաստում են եվրոպական կառույցների, միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների հետ փոխգործընկերակցության բարձրացմանը: